

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դաստիքը մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաբուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շնորհանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաբուղը: Պատասխանների ձևաբուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նշված առանձնահատկություններից ո՞րը բնորոշ չէ քոչունների արյունատար համակարգին.

- 1) փորորում զարկերակային և երակային արյունները չեն խառնվում
- 2) սիրտը քառախորշ է
- 3) ունեն առրտայի ձախ աղեղ
- 4) ունեն առրտայի աջ աղեղ

2 Թվարկված կենդանիներից ո՞րի ճպարչիջը հարուստ չէ դեղնուցով.

- 1) աղավնու
- 2) բաղակտուցի
- 3) մողեսի
- 4) շան

3 Ինչե՞րն են բնորոշ գորտին.

- 1) եռամատ առջևի և քառամատ հետևի վերջույթները
- 2) քառամատ առջևի և հնգամատ հետևի վերջույթները
- 3) քառամատ առջևի և քառամատ հետևի վերջույթները
- 4) հնգամատ առջևի և հնգամատ հետևի վերջույթները

4 Ինչերի՞ օգնությամբ է տեղաշարժվում հողաբակիկ ինֆուզորիան.

- 1) բարթիչների
- 2) մտրակների
- 3) կեղծ ոտիկների
- 4) շշիկների

5 Թվարկված բույսերից ո՞րն ունի տերևների ցանցաջիղ ջղավորություն.

- 1) հովտաշուշանը
- 2) ցորենը
- 3) ազոավաչը
- 4) զարին

6 Սնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) մուկորը, պենիցիլը բորբոսասնկեր են
- 2) վրձնատունկը խմորատունկ է
- 3) սնկերն ավտոտրոֆ օրգանիզմներ են
- 4) խմորասնկերը միաբջիջ, քլորոֆիլ պարունակող սնկեր են

7

Մարդու օրգանիզմում որտե՞ղ են ձևավորվում էրիքրոցիտները.

- 1) լյարդում, ավշային հանգույցներում
- 2) ուրցագեղձում
- 3) կարմիր ոսկրածուծում
- 4) փայծաղում և կարմիր ոսկրածուծում

8

Մարդու ողնուղեղի գորշ նյութի առջևի եղանակում կառուցվածքային ո՞ր տարրերն են գտնվում.

- 1) զգայական նեյրոնների աքսոնները և դենդրիտները
- 2) ներդիր նեյրոնների մարմինները և դենդրիտները
- 3) շարժողական նեյրոնների մարմինները
- 4) վեգետատիվ համակարգի նեյրոնների մարմինները

9

Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում մազարմատները.

- 1) բուճ մաշկում
- 2) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 3) վերնամաշկում
- 4) ենթամաշկային բջջանքում և էպիդերմիսի մահացած բջջիջների շերտում

10

Ո՞ր պնդումն է սխալ մարդու թոքերի վերաբերյալ.

- 1) պատված են թոքամզով
- 2) մերձպատային թոքամզային թաղանթը պատում է կրծքավանդակի պատը ներսից
- 3) աջ թոքը կազմված է երկու բլթից
- 4) ունեն հատած կոնի տեսք

11

Որտե՞ղ են գտնվում լսողական ընկալիչները.

- 1) կլոր պատուհանի թաղանթի վրա
- 2) կորտյան օրգանում
- 3) ձվածկ (օվալածկ) պատուհանի թաղանթի վրա
- 4) կիսաբոլոր խողովակներում

12

Ո՞ր պնդումն է սխալ մարդու արյան մակարդման վերաբերյալ.

- 1) թրոմբի կազմի մեջ մտնում են թրոմբոցիտներ
- 2) լուծելի սպիտակուցը վերածվում է անլուծելի սպիտակուցի
- 3) ֆիբրինը ազդում է ֆիբրինոզենի վրա՝ նրան դարձնելով թրոմբին
- 4) թրոմբի կազմի մեջ մտնում է ֆիբրին

13

Ո՞րն է լյարդի պատճեշային գործառույթի էությունը.

- 1) արյան վնասազերծումը թունավոր նյութերից
- 2) ածխաջրերի փոխանակությունը
- 3) լեղարտադրությունը
- 4) էրիթրոցիտների քայլայումը

14

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին A -ի վերաբերյալ.

- 1) թերվիտամինովի կամ ավիտամինովի դեպքում զարգանում են մաշկի կամ լորձաթաղանթների խոցեր, ճարպալույժ է
- 2) ջրալույժ է, ավիտամինովի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 3) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինովի դեպքում խթանվում է ռոդոպսինի սինթեզը
- 4) թերվիտամինովի կամ ավիտամինովի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույժ է

15

Ի՞նչ է տեղի ունենում մարդու սիմպաթիկ նյարդային համակարգի գրգռման ժամանակ.

- 1) բրի նեղացում
- 2) մարսողական գեղձերի ծորանների լայնացում
- 3) սրտի պասկաձև անորթների լայնացում
- 4) արյան մեջ գլյուկովի պարունակության փոքրացում

16

Մարդու ո՞ր անորով չի հոսում երակային արյուն.

- 1) բոքային երակով
- 2) վերին սիներակով
- 3) բոքային զարկերակով
- 4) լյարդի դրներակով

17

Ո՞րը մարդու վերին վերջույթի կմախրի ուկոր չէ.

- 1) անրակոսկրը
- 2) թիակոսկրը
- 3) կրծոսկրը
- 4) բազկոսկրը

18

Ինչպես է ինսուլինը կարգավորում գլյուկովի մակարդակը մարդու արյան մեջ.

- 1) նպաստում է գլյուկոզենի փոխարկմանը գլյուկոզի՝ լրացնելով նրա պակասն արյան մեջ
- 2) բարձրացնում է արյան ճնշումը
- 3) ճեղքում է արյան մեջ պարունակվող գլյուկոզը
- 4) նպաստում է գլյուկովի ավելցուկի վերածմանը գլյուկոզենի

19

Ածխաջրերի սինթեզն իրականանում է՝

- 1) հատիկավոր էնդոպլազմային ցանցում
- 2) հարթ էնդոպլազմային ցանցում
- 3) բջջային կենտրոնում
- 4) ռիբոսոմներում

20

Պիրիմիոֆինային ազոտական հիմքեր են.

- 1) ցիտոզինը, թիմինը, ուրացիլը
- 2) գուանինը, թիմինը, ուրացիլը
- 3) աղենինը, գուանինը, ցիտոզինը
- 4) ցիտոզինը, գուանինը, ուրացիլը

21

Բջջի ռիբոսոմներ չպարունակող կառուցվածքներից են.

- 1) միտոքրոնիումները
- 2) ցիտոպլազման
- 3) հատիկավոր էնդոպլազմային ցանցը
- 4) Գոլջիի ապարատը

22

Ինչպե՞ս են միմյանց միանում նուկլեոտիդներն ի-ՈՒԹ-ի մոլեկուլում.

- 1) մեկ նուկլեոտիդի ազոտական հիմքի և հարևան նուկլեոտիդի ածխաջրի միջոցով
- 2) մեկ նուկլեոտիդի ածխաջրի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով
- 3) հարևան նուկլեոտիդների ազոտական հիմքերի միջոցով
- 4) մեկ նուկլեոտիդի ազոտական հիմքի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով

23

Ի՞նչ է տրանսլյացիան.

- 1) բջջակորիզում ի-ՈՒԹ-ի մոլեկուլի սինթեզն է
- 2) ժառանգական տեղեկատվության փոխանցումն է ի-ՈՒԹ-ից ո-ՈՒԹ-ի մոլեկուլին
- 3) ԴՆԹ-ի մոլեկուլից ժառանգական տեղեկատվության փոխանցումն է ի-ՈՒԹ-ին
- 4) ի-ՈՒԹ-ի մատրիցայի հիման վրա ռիբոսոմներում սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայի սինթեզի գործընթացն է

24

Ո՞ր օրգանիզմներն են առկա նախակորիզավորների ցիտոպլազմայում.

- 1) ռիբոսոմները և վակուոլները
- 2) էնդոպլազմային ցանցը և լիզոսոմները
- 3) ռիբոսոմները և էնդոպլազմային ցանցը
- 4) միտոքրոնիումները և Գոլջիի ապարատը

- 25** Ինչպե՞ս է կոչվում օրգանիզմի բոլոր հատկանիշների ամբողջությունը.
- 1) գենում
 - 2) գենոտիպ
 - 3) ֆենոտիպ
 - 4) գենոֆոն
- 26** Ինչպիսի՞ն պետք է լինի մարդու զիգոտի քրոմոսոմային հավաքակազմը, որպեսզի ծնվի իգական սեռի առողջ երեխա.
- 1) 44 առևտոսում + XY
 - 2) 22 առևտոսում + XX
 - 3) 23 առևտոսում + XX
 - 4) 44 առևտոսում + XX
- 27** Նշված երկիրքիդային ո՞ր խաչաերումն է հանգեցնում ճեղքավորման 1:1:1:1 հարաբերությամբ, եթե երկու ալելիներում էլ առկա է ոչ լրիվ դրմինանտություն.
- 1) AABb և AABb
 - 2) Aabb և aaBb
 - 3) AaBb և AaBB
 - 4) AAAb և aaBB
- 28** Ի՞նչն է հանգեցնում պոլիալոիդիայի.
- 1) քրոմոսոմների կառուցվածքային փոփոխությունները
 - 2) քրոմոսոմների հապլոիդ քանակի քազմապատիկ անգամ մեծացումը
 - 3) առանձին քրոմոսոմների թվաքանակի փոփոխությունը
 - 4) առանձին գեների փոփոխությունները
- 29** Քազմացման ո՞ր եղանակներն են անսեռ.
- 1) խմորասնկերի բողբոջումը, բույսերի վեգետատիվ քազմացումը և ապոմիբսիսը
 - 2) ծածկասերմ բույսերի քազմացումը սերմերով
 - 3) ծովաստղերի հատվածավորումը, հիդրաների բողբոջումը
 - 4) մեղուների պարբենոգենեզը, հիդրաների բողբոջումը
- 30** Ի՞նչ պրոցեսի արդյունքում են առաջանում երկու սպերմիումները փոշեհատիկում.
- 1) գեներատիվ բջջի մեյոտիկ կիսման
 - 2) վեգետատիվ բջջի մեյոտիկ կիսման
 - 3) գեներատիվ բջջի միտոտիկ կիսման
 - 4) վեգետատիվ բջջի միտոտիկ կիսման

31 Ինչե՞րն են առաջանում էնտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում.

- 1) մկանները, նյարդերը, աղիները, երիկամները
- 2) զգայարանները, նյարդերը, թոքերը, մաշկի էպիթելի
- 3) աղիքի, խոփկների և թոքերի էպիթելի
- 4) միզածորանները, միզուկը, զիսուղեղը, լսողության օրգանները

32 Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն.

- 1) մթնոլորտային ճնշումը
- 2) գիշատչությունը
- 3) քամին
- 4) օրվա տևողությունը

33 Ո՞ր բույսն է գիշատիչ.

- 1) սարացենիան
- 2) օմելան
- 3) գաղձը
- 4) ռաֆլեզիան

34 Նշվածներից ո՞րի առաջացումն է իդիոադապտացիայի օրինակ.

- 1) թռչունների քառախորշ սրտի
- 2) մողեսների մատների լայնացումների
- 3) ֆոտոսինթեզի
- 4) կրկնակի բեղմնավորման

35 Ի՞նչն է էկոհամակարգի երկրորդային արտադրանքը.

- 1) ավտոտրոֆների կենսազանգվածի ավելացման արագությունը
- 2) էկոհամակարգը կազմող բոլոր օրգանիզմների կենսազանգվածի առաջացման արագությունը
- 3) պրոդուկտուների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 4) կոնսումնենտների կենսազանգվածի ավելացման արագությունը

36 Ո՞ր նյութը կենսահանքային չէ.

- 1) նավթը
- 2) հողը
- 3) օվկիանոսի ջուրը
- 4) կրային ապարը

37

Առանձնյակի գենոտիպն է AaBbCcDdEeFF: Զանի^o տեսակի զամեսներ կծնավորվի տվյալ առանձնյակի օրգանիզմում, եթե ալելային գեների առաջին զույգը շղթայակցված է չորրորդի հետ, իսկ երկրորդը՝ երրորդի հետ և հաշվի առնել, որ դոմինանտ գեներն իրար են շղթայակցված, իսկ ռեցեսիվները՝ իրար, և հոմոլոգ քրոմոսոմների միջև տրամախաչում չկա:

- 1) 5
- 2) 6
- 3) 32
- 4) 8

(38-39) 1400 նուկլեոտիդներից բաղկացած ի-ՈՒՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդների 26 %-ը գուանինային է, 22 % -ը՝ ցիտոզինային:

38

Գտնել աղենինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՈՒՆԹ-ն:

- 1) 672
- 2) 728
- 3) 1456
- 4) 336

39

Գտնել գուանինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՈՒՆԹ-ն:

- 1) 672
- 2) 728
- 3) 1344
- 4) 616

40

Կատուների խայտարդետ գունավորումը (միմյանց հաջորդող սև և դեղին բծերով) բնորոշ է միայն էզ կատուներին և պայմանավորված է X քրոնոսում գտնվող սև և շեկ գույները որոշող ալելային գեներով: Աև գույնը պայմանավորող գենը դոմինանտում է շեկ գույնը պայմանավորող գենի նկատմամբ: Ի՞նչ հավանականությամբ (արտահայտված տոկոսներով) սև արուի և շեկ էզի խաչասերումից սերնդում կարող են լինել խայտարդետ կատուներ:

- 1) 75 %
- 2) 100 %
- 3) 25 %
- 4) 50 %

41

Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

- A. առանձնյակների բազմացման նմանություն
- B. տեսակը կարող է գոյատևել միջավայրի միայն որոշակի պայմաններում
- C. տեսակը զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- D. քրոնոսումների բնորոշ հավաքակազմ
- E. առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքների նմանություն
- F. սպիտակուցների և նուկլեինաքրուների բնորոշ կառուցվածք և կազմ

Տեսակի չափանիշ

1. աշխարհագրական
2. էկոլոգիական
3. կենսաքիմիական
4. ձևաբանական
5. ֆիզիոլոգիական
6. գենետիկական

42

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի օրգանիզմի կառուցվածքի առանձնահատկության (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ապացույցների (նշված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքի առանձնահատկություն

- A. ձիերի եռամատ վերջույթներ
- B. մրջնակերների ատամներ
- C. մարդու կույր աղիքի որդանման ելուստ
- D. կույր օձերի վերջույթների մնացորդներ
- E. վիշապների վերջույթների մնացորդներ
- F. մարդու դեմքի խիտ մազածածկույթ
- G. մարդու մատների արանքում թաղանթների առկայություն
- H. մարդու պոչուկ

Ապացույց

1. ատամիզմ
2. ոռողիմենտ

43

Գլխուղեղի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում) կեղևի ո՞ր մասին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կեղևի գոտի

- A. լսողական
- B. տեսողական
- C. խոսքի
- D. հոտառական
- E. ճաշակելիքի
- F. շարժողական
- G. մաշկամկանային զգայության

Կեղևի մաս

- 1. քունքային բլթի ներքին մաս
- 2. գագաթային բլթ
- 3. ճակատային բլթ
- 4. կենտրոնական ակոսի ստորին մաս
- 5. ծոծրակային բլթ
- 6. քունքային բլթ

44

Մարդու մկանների ո՞ր գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր մկաններին են (նշված են աջ սյունակում) համապատասխանում:
Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

- A. կծկվելիս իջեցնում են (է) գլուխը
- B. մասնակցում են (է) ներշնչմանը
- C. ձգում են (է) ազդրը դեպի հետ
- D. մասնակցում են (է) գլխի աջ-ձախ բերման
- E. մասնակցում են (է) արտաշնչմանը
- F. կծկվում են (է) թիակներն իրար մոտեցնելիս
- G. կծկվելիս բազուկն իջնում է և շարժվում հետ

Մկաններ

- 1. կրծոսկրաանրակապտկաձև մկաններ
- 2. ներքին միջկողային մկաններ
- 3. նստատեղի մկաններ
- 4. սեղանաձև մկան
- 5. արտաքին միջկողային մկաններ
- 6. մեջքի լայն մկան

45

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) էուկարիոտ բջջի կենսական ցիկլի ո՞ր փուլում է (նշված է աջ սյունակում) իրականանում:
Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործընթաց

Կենսական ցիկլի փուլ

- | | |
|---|-------------------|
| A. ցենտրիուլների կրկնապատկում | 1. պլոֆազ |
| B. մատրիցային սինթեզ ԴՆԹ-ի երկու շղթաների վրա | 2. S |
| C. քրոմատիդների տարամիտում դեպի բջջի բևեռներ | 3. անաֆազ |
| D. քրոմոսոմների դասավորում իլիկի հասարակածային հարթության վրա | 4. G ₁ |
| E. ԴՆԹ-ից տեղեկատվության արտագրման դադարում | 5. G ₂ |
| F. բջիջն աճում է՝ հասնելով մայրական բջջի չափսերին | 6. մետաֆազ |
| G. բաժանման իլիկի թելիկները կազմող սպիտակուցների սինթեզ | |

46

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի գործընթացների հաջորդականությունը.

1. մոլեկուլային թթվածնի առաջացում
2. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
3. ջրածնի աստոմների միացում փոխադրիչ մոլեկուլներին
4. ոլիուլոգարիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտի մասնակցությամբ վեցածխածնային միացության առաջացում
5. ֆոտոնի կլանում
6. ջրի ֆոտոլիզ
7. Էլեկտրոնների անջատում քլորոֆիլի մոլեկուլից

47

Ինչպիսի՞ն է աճման գոտի անցած բջջի հետ կատարվող վերափոխումների հաջորդականությունը զամետոգեննեզի ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ԴՆԹ-ի քանակի կրկնապատկում
2. քրոմոսոմների տարամիտում
3. սպերմատիդների առաջացում
4. քրոմատիդների տարամիտում
5. նուկլեոտիդների միջև կովալենտ կապերի խզում
6. հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա
7. n2c հավաքակազմով բջիջների առաջացում

48

Ի՞նչ հաջորդականությամբ է մքնոլորտային թրվածինն անցնում մարդու բջիջներ՝ սկսած ներշնչման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. օրսիհեմոգլոբինի առաջացում
2. օդի թափանցում թոքաբշտեր
3. թրվածնի դիֆուզում մազանոքների պատով
4. թրվածնի անջատում հեմոգլոբինից
5. օրսիհեմոգլոբինի փոխադրում արյան կազմում մեծ շրջանի անոքներով
6. թրվածնի դիֆուզում թոքաբշտերի պատով
7. թրվածնի դիֆուզում ներքին օրգանի բջջի բջջաբաղանքով

49

Ի՞նչ հաջորդականությամբ են դասավորված մարդու մարտողական համակարգի բաժինները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. զստաղի
2. վայրիջակ խթաղի
3. տասներկումատնյա աղի
4. լայնակի խթաղի
5. ստամոքսի մարմին
6. վերելակ խթաղի
7. բարակ աղի
8. ստամոքսի հատակ

50

Զանգը հնչելիս նյարդային գրգիռն ի՞նչ հաջորդականությամբ է անցնում ազդակի հաղորդման ուղու նշված տեղամասերը թքազատության պայմանական ռեֆլեքսի դրսւորման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ձայնի ընկալիչ
2. երկարավուն ուղեղի թքազատության կենտրոն
3. շարժողական նեյրոն
4. մեծ կիսագնդերի կեղևի լսողական զոտի
5. զգայական նեյրոն
6. թքագեղձ
7. մեծ կիսագնդերի կեղևի սննդառական կենտրոն

51

Ինչպիսի՞ն է լյարդի ծծանի զարգացման փուլերի հաջորդականությունը՝ սկսած հիմնական տիրոջ օրգանիզմից դուրս գալու պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թրթուրի զարգացումը լճախխունջի մարմնում
2. ցիստավորված թրթուր
3. պոչավոր թրթուր
4. թարթիչավոր թրթուր
5. ձու
6. սեռահասուն լյարդի ծծանը խոշոր եղջերավոր անասունի լյարդում

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Մորամախաչման շնորհիվ առաջանում են գեների նոր զուգակցություններ, որի արդյունքում սերնդում առանձնյակների ժառանգական հատկությունների նույնականությունը ծնողական առանձնյակի ժառանգական հատկությունների հետ ավելի է մեծանում
2. Մաքուր գծերին պատկանող օրգանիզմներ էին կոչվում այն օրգանիզմները, որոնք մի քանի սերունդ հետազոտվող հատկանիշի առումով անփոփոխ էին եղել և ճեղքավորում չէին տվել
3. Գիգոսի միտոզով բաժանումը ուղեկցվում է բլաստոմերների չափսերի մեծացմամբ մինչև մայրական բջիջների չափսերն
4. Ըստ գամետների մաքրության օրենքի՝ գամետների առաջացման ժամանակ յուրաքանչյուր գամետի մեջ ընկնում են միայն տվյալ հատկանիշը պայմանավորող գույգ գենները
5. Խոմոզիգոս դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշով ծնողական ձևերի խաչաերման արդյունքում երկրորդ սերնդում ստացվող ֆենոտիպերի քանակն ավելի մեծ է, քան գենոտիպերինը
6. Երկինետերօգիգոս առանձնյակի և երկինողօգիգոս դոմինանտ առանձնյակի խաչաերման արդյունքում, գույգ ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գենների անկախ բաշխման դեպքում սերնդում ստացվում են չորս գենոտիպային և երկու ֆենոտիպային խմբեր
7. Բրախիդակտիլիան միջանկյալ ժառանգման երևոյթի օրինակ է

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ԱԵՖ-ի կառուցվածքում ածխաջրային մնացորդի և ֆոսֆորական թթվի միջև առկա կապի մեջ պահետավորված է մեծ քանակությամբ էներգիա, այդ պատճառով այդ կապը կոչվում է մակրոէրգիկ
2. Գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նուկլեոտիդների մեկ եռյակը կարող է կոդավորել 1- 6 ամինաթթուներ
3. Հատիկավոր էնդոպլազմային ցանցով հարուստ են մարդու ենթաստամոքսային գեղձի, թթագեղձերի բջիջները
4. Քլորոպլաստների ներքին թաղանթն առաջացնում է բազմաթիվ թիթեղիկներ՝ թիլակոիդներ, որոնք կուտակվելով մեկը մյուսի վրա, կազմավորում են նիստեր
5. Միտոքոնդրիումների արտաքին թաղանթը հարթ է, դրանում շատ են ֆոսֆոլիպիդները և քիչ են սպիտակուցները
6. Էներգիական փոխանակության ժամանակ գլյուկոզի ճեղքավորման թթվածնային փուլում $NAD \cdot H_2$ -ի և $FBAD \cdot H_2$ -ի պրոտոնների և էլեկտրոնների վերջնական ակցեպտորը մոլեկուլային ջրածինն է

54

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. ողի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո, կոչվում է շնչառական ծավալ
2. ականջի և աչքի ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են երկարավուն ուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաթմբի համապատասխան կենտրոններ
3. քրի խոռոչի մակերեսը պատված է լորձաբաղանթով, որը կազմված է թարթիչավոր էպիթելային հյուսվածքից
4. մարդու էրիթրոցիտների մակերեսին գտնվում են A և B ագլյուտինգեները, իսկ արյան պլազմայում՝ α և β ագլյուտինգեները
5. միջին ուղեղում տեղակայված կենտրոնները կարգավորում են քրի մեծությունը, ակնարյուրեղի կորությունը
6. պարասիմպաթիկ համակարգին պատկանող թափառող նյարդով եկած գրգիռները արագացնում են սրտի գործունեությունը
7. վեգետատիվ նյարդային համակարգի նյարդաբելերը մարմնական նյարդաբելերի համեմատ ավելի բարակ են, իսկ գրգիռի փոխանցման արագությունն ավելի դանդաղ է

55

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. օձերի կրծքավանդակն առաջանում է կրծքային հինգ կողերի և կրծոսկրի միաձուլումից
2. ոսկրային ձկների ողնաշարը պարանոցային ողի միջոցով կիսաշարժուն միացած է գլխի կմախքի՝ գանգի հետ
3. մոծակն ունի ծակող-ծծող, իսկ մեղուն՝ կրծող-ծծող բերանային ապարատ
4. միջատները մարտղական համակարգում ունեն կտնառք, կերակրափող, կոյանոց
5. օղակավոր որդերն ունեն մարմնի երկրորդային խոռոչ, օժտված են երկկողմ համաշափությամբ
6. հիդրայի մարմնից սննդի չմարսված պինդ մնացորդները հեռացվում են հետանցքով
7. բակտերիաների սպորագոյացման ժամանակ թզի պարունակությունը սեղմվում է, և հիմնական թաղանթի տակ առաջանում է նոր, ավելի խիտ թաղանթ

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Ծերևշևսկու և Թերների սինդրոմը զենոմային մուտացիայի հետևանք է
2. Ֆենիլկետոնուրիայի պատճառը առոտոսմային ռեցեսիվ գենի մուտացիան է
3. ասիմետրիկ տրանզուլացիայի դեպքում երկու քրոմոսոմների ցենտրոմեր չպարունակող հատվածները միանում են իրար
4. մեղուների և մրջյունների օրգանիզմում սեռական քրոմոսոմներ չկան. արուների բոլոր բջիջներն ունեն քրոմոսոմների դիպլոիդ հավաք
5. մոդիֆիկացիոն փոփոխականությունը դրսերվում է ռեակցիայի նորմայի սահմաններում և փոխանցվում է սերունդներին
6. իգական հետերոգամետություն ունեն բիբեռները, բոչունները, սողունները
7. կարտոֆիլի պալարի կանաչեղի լույսի տակ հարմարվողական փոփոխականության օրինակ է

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ի տարբերություն միջատակեր բույսերի, գիշատիչ սմկերն ընդունակ են կարգավորելու հողում նեմատոդների քանակը
2. կենսաբանական շրջապտույտի շարժիչ ուժերն են արեգակնային ճառագայթման էներգիան, կենդանի նյութի կենսագործունեությունը
3. սիմպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի ներսում
4. կայունացնող ընտրության դեպքում պոպուլյացիայի գենոֆոնդը չի փոփոխվում
5. կոլիբրիի և իլիկաթիթեռի բերանային ապարատների նմանությունը կոնվերգենցիայի օրինակ է
6. ամենասալիզմը միջտեսակային փոխարարերությունների ձև է, որի դեպքում երկու փոխազդող տեսակներն ել օգուտ են ստանում, սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ

58

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. բարակ աղիի թափիկները ծածկող միաշերտ էպիթելային հյուսվածքի բջիջներում սինթեզվում են օրգանիզմին բնորոշ ճարպեր
2. ենթաստամոքսային գեղձն ունի գլխիկ, վզիկ, պոչ, որը հարում է փայծաղին
3. մարդու կրծքավանդակում կողոսկրերը կիսաշարժուն միացած են կրծոսկրին
4. կոնքոսկրերը և կողոսկրերը ձևավորում են անշարժ միացումներ
5. անոթաբաղանքի կազմի մեջ են մտնում եղթերաբաղանքը, թարթչային մարմինը և թիրը
6. երկար խողովակածն ոսկրերի գլխիկները ծածկող աճառային հյուսվածքի բջիջների բաժանման շնորհիվ ոսկրերն աճում են երկարությամբ
7. պայմանական ռեֆլեքսի արտաքին արգելակումն առաջանում է, եթե ոչ պայմանական գրգռիչը չի ամրապնդվում պայմանական գրգռիչով, որի հետևանքով աստիճանաբար վերանում են կեղևում առաջացած ժամանակավոր կապերը

(59-60) Ֆոտոսինթեզի պրոցեսում բազմամյա մեկ ծառը 30 օրում (16-ժամյա լուսային օր) արտադրել է 25088 լ թթվածին: 1 մոլ գազը գրադեցնում է 22,4 լիտր ծավալ:

59

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (գրամ):

60

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (m^2):

- (61-62) Օրգանիզմում գլյուկոզի ծեղման պրոցեսում առաջացավ $132 \text{ м} \text{л CO}_2$ և $880 \text{ м} \text{л} \text{ԱԵՖ}$: Ընդունել, որ $1 \text{ м} \text{լ} \text{ գլյուկոզից} \text{ մինչև} \text{ կաթնաթրու} \text{ ծեղման} \text{ ընդհանուր} \text{ էներգիան} \text{ կազմում} \text{ է} \text{ 200} \text{ կ} \text{Ջ} \text{ և} \text{ ԱԵՖ-ի՝} \text{ մինչև} \text{ ԱԿՖ} \text{ ծեղման} \text{ արդյունքում} \text{ անջատվում} \text{ է} \text{ 30} \text{ կ} \text{Ջ/մ} \text{լ} \text{ էներգիա:}$

61

Քանի՞ մոլ ջուր է անջատվել այդ պրոցեսի ընթացքում:

62

Քանի՞ գրամ քրտինք է գոլորշիացել օրգանիզմից, եթե գոլորշիացման վրա ծախսվել է այդ պրոցեսի արդյունքում անջատված ջերմային էներգիայի $15\%-ը$ և $1 \text{ գ} \text{ քրտինքի} \text{ գոլորշիացման} \text{ համար} \text{ ծախսվում} \text{ է} \text{ 2,45} \text{ կ} \text{Ջ} \text{ էներգիա:} \text{ Պատասխանում} \text{ պահպանել} \text{ միայն} \text{ ամբողջ} \text{ թիվը:}$

(63-65) Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 18 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 5 ժամ: Աշխատանքի ժամանակ մարդու սրտի կծկումների հաճախականությունն ավելանում է 2 անգամ, իսկ յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալը՝ 1,5 անգամ, շնչառական շարժումներն արագանում են 2 անգամ, յուրացվող թթվածնի ծավալն աճում է 25 %-ով, իսկ շնչառական օդի ծավալը՝ 1,6 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մեկ րոպեի ընթացքում սիրտը կծկվում է 70 անգամ, և յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 70 մլ արյուն, հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում:

63

Քանի՞ լիտր արյուն է արտամղվել առրտա արթուն ժամանակ:

64

Քանի՞ լիտր թթվածին է յուրացվել օրգանիզմում մեկ օրվա ընթացքում:

65

Քանի՞ լիտր թթվածին է ստացել գլխուղեղը 5 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում: Ընդունել, որ գլխուղեղի հասնում առրտա մղված արյան ծավալի 20 %-ը:

(66-67) Ալիքածն մազերը սոտացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունենում է գաճագուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ: Ալիքածն մազերով և արյան I խմբով տղամարդին ամուսնացել է ուղիղ մազերով և արյան IV խմբով կնոջ հետ:

66

Որոշել գաճագուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

67

Որոշել ըստ տվյալ հատկանիշների երկինտերոզիզոտ երեխայի ծնվելու հավանականությունը (%-ով):

68

Տարվա ընթացքում արեգակնային ճառագայթման էներգիայի հոսքը մարզագետին կազմել է $8 \cdot 10^{10}$ կՎ/հա: Մեկ հեկտար մարզագետնի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 20000 կգ խոտ: Առաջնային արտադրանքի յուրաքանչյուր 1 գ-ում կուտակվում է մոտ 25 կՎ: Արեգակնային էներգիայի քանի՞ %-ն է յուրացնում մարզագետինը:
Պատասխանը քազմապատկել 1000-ով:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Փագոցիտողի և պինցիտողի գործընթացներն ընթանում են առանց ԱԵՖ-ի ծախսի
2. Ալազմալեմի համեմատությամբ՝ Էնդոպլազմային ցանցի քաղանթն ավելի հաստ է
3. Կենդանական բջիջներում ցիտոպլազմայի կիսումն իրականանում է պլազմային քաղանթի ներփակման եղանակով
4. Բջջաբաղանքը կազմված է արտաքին շերտից և դրա տակ գտնվող պլազմալեմից
5. Ալազմային քաղանթի կազմության մեջ մտնող լիալիդների ճարպաթթվային կառուցամասերը ներկայացված են «գլխիկներով», իսկ սպիրալային կառուցամասերը՝ «պոչիկներով»
6. Ալազմալեմին բնորոշ է ընկալային ֆունկցիան, որն իրագործվում է հատուկ սպիտակուցների միջոցով

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Անեֆրոններից մեզը հավաքող խողովակները միանալով առաջացնում են միզածորան, որը տանում է մեզը դեպի միզապարկ
2. Սիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ միզագոյացումը ճնշվում է, և օրվա ընթացքում առաջացող մեզի ծավալը նվազում է
3. Երիկամ են մտնում երկու խոշոր անորներ՝ երիկամային երակը և զարկերակը
4. Երիկամները տեղակայված են կոնդրոսկրերի փոսիկներում
5. Անեֆրոնի պատիճը գտնվում է երիկամի կեղևային շերտում, իսկ ծնկաձև խողովակը՝ միջուկային շերտում
6. Անեֆրոնի պատիճ մտնող առբերող զարկերակը ճյուղավորվում է մազանոթների, որոնք միանալով ձևավորում են արտատար զարկերակ